Քաղաքացիական գործ ԵԴ 2/0353/02/23

ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹԸՆԴՈՒՆԵԼՈՒ, ՊԱՏԱՍԽԱՆՈՂԻՑ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾԸ ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏՈՒՄ ՔՆՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

18-ը ապրիլի 2023թ. ք.Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը /դատավոր Ա. Մկրտչյան/, ուսումնասիրելով «Խաչ պար» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայցադիմումն ընդդեմ «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության՝ ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/16 ընթացակարգի մրցույթի գնահատող հանձնաժողովին գնանշման հարցման ընթացակարգը հրավերի 1-6, 9-12 չափաբաժինների մասերով չկայացած հայտարարելու մասին որոշում ընդունելուն պարտավորեցնելու պահանջի մասին

ՊԱՐԶԵՑ

Հայցադիմումը ներկայացվել և դատավոր Ա.Մկրտչյանին մակագրվել է 14.04.2023թ., 18.04.20223թ. հանձնվել դատավորի աշխատակազմին:

Դատարանն արձանագրում է, որ հայցադիմումը վարույթ ընդունելը մերժելու կամ վերադարձնելու հիմքերը բացակայում են, ուստի հայցադիմումը պետք է ընդունել վարույթ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:

Նույն օրենսգրքի 234.6 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

Նույն օրենսգրքի 234.8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող անձինք և նրանց ներկայացուցիչները դատական նիստի ժամանակի և վայրի, ինչպես նաև սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում առանձին դատավարական գործողություններ կատարելու մասին ծանուցվում են էլեկտրոնային հաղորդակցության միջոցով ծանուցագրերը և այլ փաստաթղթեր սույն օրենսգրքի 97-րդ հոդվածով սահմանված կարգով հայցադիմումում նշված էլեկտրոնային փոստին ուղարկելու եղանակով:

Նույն օրենսգրքի 234.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Դատարանը սույն գլխով նախատեսված վեճերով գործերը քննում և դրանց վերաբերյալ վճիռները և որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործը քննել դատական նիստում:

Դատարանը, հայցվորի կողմից ներկայացված՝ գործը դատական նիստում քննելու մասին միջնորդության քննարկման արդյունքում գալիս է եզրահանգման, որ գործն անհրաժեշտ է քննել դատական նիստում:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 234.5-րդ, 234.6-րդ, 234.8-րդ, 188-րդ, 199-րդ, 200-րդ հոդվածներով, Դատարանը

ՈՐՈՇԵՑ

Հայցադիմումն ընդունել վարույթ, եզրափակիչ դատական ակտի հրապարկման օր սահմանել 2023թ.մայիսի 31-ը:

Հրավիրել դատական նիստ՝ 2023թ.մայիսի 16-ին, ժամը 16:00-ին, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի «Աջափնյակ-2» նստավայրում /11-րդ հարկ, դահլիճ թիվ 8/:

Կողմերի ծանուցումն իրականացնել էլեկտրոնային հաղորդակցության միջոցով՝ հայցադիմումում նշված էլեկտրոնային փոստի հասցեներին ուղարկելու եղանակով:

Պատասխանող «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունից պահանջել սույն որոշման ստանալու օրվանից հնգօրյա ժամկետում Դատարանին ներկայացնել ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/16 ծածկագրով գնման գործընթացի՝ իր տիրապետության ներքո բոլոր ապացույցները:

Որոշման ուժի մեջ է մտնում ընդունման պահից և բողոքարկման ենթակա է:

ԴԱՏԱՎՈՐ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

Digitally signed by MKRTCHYAN ARAM
1712720074
Date: 2023.04.18 18:10:11 AMT